

<p>Արդյո՞ք երեխաներն ավելի շատ պաշտպանություն կարիք ունեն, քան չափահասները՝ այս իրավունքից օգտվել կարողանալու համար</p>	<p>Ի՞նչ նայլ կերպ կլինեն ձեր կյանքում, եթե դուք այս իրավունքից օգտված չլինեիք</p>
<p>Ինչպե՞ս կարող է ռադիո/հեռուստագովազդ ըօգնել խթանել այս իրավունքը</p>	<p>Արդյո՞ք բոլոր պետությունները երաշխավորում են այս իրավունքը</p>
<p>Գիտե՞ք այս իրավունքի խախտման դեպքեր ձեր ամենօրյակյանքում</p>	<p>Արդյո՞ք ձեր երկիրը պետք է խզի դիվանագիտական կապերը այս երկրների հետ, որոնք խախտում են այս իրավունքը</p>
<p>Գիտե՞ք արդյոք որ եւէ կազմակերպություն, որը զբաղվում է կոնկրետ այս իրավունքի խթանմամբ</p>	<p>Գոյություն ունե՞ն այնպիսի իրավիճակներ, որոնք խոչընդոտում են երեխաներին օգտվել իրենց այս իրավունքից</p>
<p>Արդյո՞ք կարծում եք, որ այս իրավունքն ավելի կարելու է, քան մնացած իրավունքները</p>	<p>Արդյո՞ք ձեր կյանքը էականորեն տարբեր կլինեն, եթե այս իրավունքը գոյություն չունենար</p>

## Հոդված 2

1. Մասնակից պետությունները հարգում են և ապահովում են սույն կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները իրենց իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր երեխայի համար՝ առանց որևէ խտրականության, անկախ առաջից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական ելայլ համոզմունքներից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից ել երեխայի ծնունդից, նրա ծնողներից կամ օրինական խնամակալներից կամ որևէ այլ հանգամանքից:

## Հոդված 6

1. Մասնակից պետությունները նդունում են, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի հիմնարար իրավունք:
2. Մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով ապահովում են երեխայի գոյատևումը ել առողջ զարգացումը:

## Հոդված 7

1. Երեխան գրանցվում է ծնվելու և ցուցված ծննդյան պահից ձեռք է բերում անվանել քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դահնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

## Հոդված 12

1. Իր սեփական հայացքները ձեռնարկելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Ընդ որում, երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրատարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ու շարունակական:

2. Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ունկնդրվել թե անմիջականորեն, թե իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով, ազգային օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով:

### Հոդված 13

1. Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտել իր կարծիքը . այդ իրավունքը ներառում է երեխայի ընտրությունը ամբօրյան ավուր, գրավոր կամ տպագիր ձեւով, արվեստի ստեղծագործություն անտեսքով կամ այլ միջոցների գործադրմամբ, անկախ սահմաններից, ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը:

### Հոդված 14

1. Մասնակից պետությունները հարգում են մտքի, խղճի և կրոնի ազատություն՝ երեխայի իրավունքը:

## Յոդված 15

1. Մասնակից պետությունը ներքին ընդունում է նաև միավորումների մեջ մտնելու եւ խաղաղ հավաքների մասնակցելու երեխայի ազատության իրավունքը:

## Յոդված 16

1. Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող դառնալ կամայական կամ ապօրինի միջամտության կամ իր պատվի եւ հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության օբյեկտ:

## Հոդված 22

1. Մասնակից պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի փախստակ և կարգավիճակ ստանալ ցանկացող, գործող միջազգային կամ ներքին իրավունքի ընթացակարգի համաձայն փախստակ համարվող երեխայի համար, ինչպես ծնողների կամ ցանկացած այլ անձանց կողմից ուղեկցվելու, այնպես էլ չունեցվելու դեպքում ապահովվի պատշաճ պաշտպանություն եւ մարդասիրական օգնություն՝ կիրառելի իրավունքներից օգտվելու համար, որոնք շարադրված են սույն կոնվենցիայում եւ մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային կամ մարդասիրական փաստաթղթերում, որոնց մասնակիցներն չված պետությունները:

## Հոդված 23

1. Մասնակից պետություններն ընդունում են, որ մտավոր կամ ֆիզիկական ոչ լիարժեք երեխան պետք է վարի լիարժեք եւ արժանավայել կյանք այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությունը եւ դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին:

## Հոդված 26

1. Մասնակից պետություններն ընդունում են սոցիալական ապահովություն (ներառյալ սոցիալական ապահովագրությունը) բարիքներից օգտվելու յուրաքանչյուր երեխայի իրավունքը եւ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ համաձայն իրենց ազգային օրենսդրության

## Հոդված 28

1. Մասնակից պետություններն ընդունում են երեխայի կրթության իրավունքը, եւ հավասար հնարավորություններ հիման վրայ այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես ,

- ա) մտցնում են անվճար եւ պարտադիր տարրական կրթություն ,
- բ) խրախուսում են միջնակարգ կրթություն տարբեր, ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտական ձեւերի զարգացումը, ապահովում են դրամատչելի ութնամյա բուրժուալ երեխաների համար եւ ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն մտցնելը եւ անհրաժեշտության դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը ,
- գ) բուրժուալ անհրաժեշտ միջոցների տրամադրմամբ ապահովում են բարձրագույն կրթության մատչելի ութնամյա, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների ,
- դ) կրթության եւ մասնագիտական պատրաստության բնագավառում ապահովում են տեղեկատվության եւ նյութերի մատչելի ութնամյա բուրժուալ երեխաների համար ,
- ե) միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելու եւ դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը

### Հոդված 30

Այն պետությունը, որ գոյություն ունեն է թնիկական, կրոնական կամ էթնոկենտրոնական փոքրամասնություններ կան բնիկ ազգաբնակչության թվին պատկանող անձինք, այդպիսի փոքրամասնություններին կամ բնիկ ազգաբնակչությանը պատկանող երեխային չի կարող մերժվել իր խմբի մյուս անդամների հետ իր մշակույթից օգտվելու, իր կրոնը դավանելու եւ նրա ծեսերը կատարելու, ինչպես նաեւ մայրենի էթնոկենտրոնացումը իրավունքը:

### Հոդված 31

1. Մասնակից պետությունը ընդունում է հանգստի եւ ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին եւ զվարճալի միջոցառումներին, ինչպես նաեւ մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու եւ արվեստով զբաղվելու երեխայի իրավունքը:



### Հոդված 32

1. Մասնակից պետություններն ընդունում են տնտեսական շահագործումից ելնալիս աշխատանք կատարելուց պաշտպանվածության երեխայի իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել նրա առողջության համար կամ խոչընդոտել կրթությանը և ստանալու ն, կամ վնասել նրա առողջությանը եւ  
Ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը :

### Հոդված 34

Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բռնություններից եւ սեռական այլասերումից : Այդ նպատակով մասնակից պետությունը,  
մասնավորապես, ազգային, երկկողմ եւ  
բազմակողմանի մակարդակներով ձեռնարկում են բռնության հրաժեշտ միջոցները, որպեսզի  
կանխարգելեն  
ա) երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը, բ) շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը, գ) շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի եւ պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը :

### Հոդված 37

Մասնակից պետություններն ապահովում են, որ  
ա) ոչ մի երեխա չեն թարկվի խոշտանգումների կամ  
այլ դժգոհանքի, անմարդկային կամ

արժանապատվությունները վիրավորող  
վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մահապատիժ, ոչ  
ցմահ բանտարկություն, որն ազատման  
հնարավորություն չի նախատեսում, չի  
սահմանվում 18 տարին չլրացած անձանց կողմից  
կատարված հանցագործությունների համար,

բ) ոչ մի երեխա չգրկվի ազատությունից  
անօրինակ կամ կամայական կերպով: Երեխայի  
ձերբակալությունը, կալանքը կամ  
բանտարկությունը իրականացվում են  
համաձայն օրենքի եւ գործադրվում միայն  
որպես սծայրահեղ միջոց՝ որքան հնարավոր է  
կարճ ժամանակամիջոցում,

### Հոդված 38

3. Մասնակից պետությունները ձեռնպահ են մնում 15  
տարին չլրացած ցանկացած անձի՝ իրենց զինված  
ուժերում ծառայության կանչելուց: Հավաքագրման  
ժամանակ 15 տարին չլրացած, բայց դեռ 18 տարին  
չլրացած անձանց թվից մասնակից պետությունները  
ձգտում են նախապատվություն տալ ավելի բարձր  
տարիք ունեցողներին:

4. Չինված հակամարտությունների ժամանակ  
քաղաքացիական ազգաբնակչության պաշտպանության  
առթիվ միջազգային մարդասիրական իրավունքով  
իրենց ստանձնած պարտավորությունների  
համաձայն, մասնակից պետությունները  
պարտավորվում են ձեռնարկել հնարավոր բոլոր  
միջոցները զինված հակամարտությունից տուժող  
երեխաների պաշտպանությանը եւ խնամքն  
ապահովելու նպատակով

## Հոդված 40

1. Մասնակից պետություններն ընդունում են քրեական օրենսդրությունը խախտած համարվող, մեղադրվող կամ մեղավոր ճանաչված յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա արժանապատվության եւ նշանակալիության զգացումի զարգացմանը, երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքներին եւ ուրիշների հիմնական ազատությունների նկատմամբ, եւ որի դեպքում հաշվի է առնվում երեխայի տարիքը եւ հասարակության մեջ նրավերամիասնացման եւ հետագա դրական դեր խաղալու նպաստելու ցանկալիությունը: